

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020



ՀԱՅԿ ՊԻՈՆԻ ՀԱԿՈՒՅԱԼ

Ականավոր հայ հնագետ Հայկ Հակոբյանը ծնվել է 1956 թ. նոյեմբերի 5-ին Երևան քաղաքում անվանի գրականագետ Պիոն Հակոբյանի ընտանիքում: Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը ավարտելուց հետո Հ. Հակոբյանը 1978 թ. աշխատանքի է անցնում Հայաստանի Ազգագրության թանգարանում: Նորաստեղծ թանգարանը իր տանիքի տակ էր ընդունել բազմաթիվ երիտասարդ կադրերի՝ դառնալով տասնյակ պատմաբանների, հնագետների, ազգագրագետների յուրատեսակ դարբնոց: Ազգագրության թանգարանում Հակոբյանը անցավ մեծ ճանապարհ լինելով գիտաշխատող, ցուցադրական և մեթոդական բաժնի վարիչ, ապա՝ գիտական քարտուղար: Թանգարանում աշխատանքի տարիներին ձեռք բերված գիտելիքները և հմտությունները Հ. Հակոբյանի մոտ ձևավորեցին թանգարանացվող նյութի նկատմամբ հոգատար վերաբերմունք, հուշարձանի ընկալումը էքսպոզիցիոն տեսակետից:

1981 թ. նա ընդունվում է ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիային հնագիտության ինստիտուտի ասպիրանտուրա, որտեղ և պատրաստում է թեկնածուական ատենախոսությունը ականավոր հնագետ, անտիկ շրջանի հնագիտության խոշորագույն մասնագետներից մեկի՝ Գենադի Կոշելենկոյի ղեկավարությամբ: Ասպիրանտուրայում ուսումնառության տարիներին Հ. Հակոբյանը մասնակցում է մի շարք հանգուցային հուշարձանների, մասնավորապես, Հին Նիսայի պեղումներին: Մոսկվայում ուսումնառության տարիներին ձևավորվեցին Հակոբյանի հետազոտողի այնպիսի գծեր, ինչպիսիք էին ստատիստիկ մեթոդների արժևորումը, նորագույն մեթոդների օգտագործման կարևորության գիտակցումը: Ասպիրանտական տարիները հաջողությամբ պսակվում են «Հայաստանի և Հռոմի տնտեսական և մշակութային կապերը» թեմայով 1986 թ. Մոսկվայում ԽՍՀՄ ԳԱ հնագիտության ինստիտուտում թեկնածուական ատենախոսության պաշտպանությամբ: 2017 թ. նոյեմբերին նա ընտրվում է ՀՀ ԳԱ պատմության ինստիտուտի հին դարերի բաժնի վարիչ:

Հայաստանում առաջին հուշարձանը, որի պեղումներին ակտիվ մասնակցել է Հ. Հակոբյանը, Հին Հայաստանի մայրաքաղաք Արմավիրն էր: Տասնամյակների ընթացքում Արմավիրի արշավախումբը մեծագույն դպրոց է հանդիսացել մի քանի սերունդ հայ հնագետների համար, քանզի նրա ղեկին էին կանգնած այնպիսի խոշոր մասնագետներ, ինչպես Գևորգ Տիրացյանը, Հարություն Մարտիրոսյանը:

Նա մեծագույն ներդրում ունի անտիկ Շիրակի պատմության և նյութական մշակույթի ուսումնասիրության գործում: Նրա կողմից 1991-1992 թթ. պեղվեց Կարմրաքար գյուղի մոտակայքում գտնվող անտիկ դամբարանադաշտը: Սակայն Հակոբյանի մասնագետի լավագույն ունակությունները, որպես դաշտային հնագետ և վերլուծաբան, բացահայտվեցին Հողմիկի հելենիստական հուշարձանի պեղումների ընթացքում: Հողմիկի պաշտամունքային համալիրների և կոթողների պեղումները մեծագույն նշանակություն ունեն նախաքրիստոնեական Հայաստանի հոգևոր կյանքի վերակազմության գործում:

Հ. Հակոբյանի դաշտային գործունեության մեջ կարևոր նշանակություն ունեցան Ծիծեռնակաբերդի պեղումները, որի անտիկ բնակավայրի պեղումների արդյունքները ոչ միայն մեծապես ընդլայնեցին մեր գիտելիքները Հայաստանի մայրաքաղաքի պատմության մասին, այլև թույլ տվեցին հեղինակին հիմնավոր ենթադրություններ կատարել անտիկ Երևանի կառուցվածքի մասին՝ համադրելով այն Հին Հայաստանի այլ կենտրոնների քաղաքաշինական առանձնահատկությունների հետ:

Այս առումով հատկանշական են նրա տեսական ուսումնասիրությունները, մասնավորապես, Հին Հայաստանի մեհյաններին նվիրված աշխատությունները: Բազմակողմանի զարգացած գիտնականին հաջողվեց վեր հանել հեթանոսական պաշտամունքին առնչվող բազմաթիվ և բազմաբնույթ խնդիրներ. կուռույցների ճարտարապետությունը, ծեսի կազմակերպումը, մերձավոր արևելյան և հռոմեական հավատալիքների ազդեցությունը Հայաստանի հոգևոր կյանքի վրա, Հայաստանի առնչությանը Միթրային նվիրված հռոմեական տաճարներին:

Հ. Հակոբյանի գիտական հետաքրքրությունների մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Տիգրան Մեծի կյանքի և գործունեության ուսումնասիրությունը: Նրա «Տիգրան Մեծ» մենագրությունը, որտեղ ի մի են բերված Հայոց մեծ գահակալի մասին հայկական և օտարերկրյա աղբյուրների տեղեկությունները, նոր խոսք է հայագիտության մեջ: Այստեղ առաջ քաշված տեսակետներն աչքի են ընկնում իրենց թարմությամբ և չկաղապարվածությամբ: Հին հունական աղբյուրների մանրակրկիտ քննությունը թույլ տվեց հեղինակին նորովի մեկնաբանել Տիգրան Մեծի՝ Լուկոլլոսի և Պոմպեոսի հետ բախումների պատմությունը, Տիգրան Մեծի դարաշրջանի դիվանագիտությունը:

Կարևոր նշանակություն ունեցան նաև հայ բանակին և ռազմարվեստին նվիրված՝ Հ. Հակոբյանի աշխատությունները: Մի շարք հոդվածներում և մենագրություններում հեղինակը համալիր կերպով դիտարկում է ռազմարվեստի զարգացումը բրոնզե դարից Երվանդյան ժամանակաշրջան: Գրավոր և հնագիտական աղբյուրների հմուտ համադրումը կանխորոշում է այս աշխատանքների նորարարական բնույթը:

Անուրանալի է նաև Հ. Հակոբյանի դերը Սևանի ավազանի հուշարձաններն ուսումնասիրող արշավախմբի աշխատանքներում: Կատարված հետազոտությունները թույլ տվեցին Հ. Հակոբյանին լրջագույն հետևությունների հանգել Հայաստանում խեցեգործական ավանդույթների զարգացման վերաբերյալ՝ սկսած մ.թ.ա. I հազարամյակի կեսից մինչև վաղ միջնադար:

Սակայն հնագետի գիտական հետաքրքրությունները բնավ չէին սահմանափակվում անտիկ ժամանակաշրջանի ուսումնասիրությամբ: Հ. Հակոբյանը թիրախավորել է նաև Հայաստանի՝ հեթանոսությունից քրիստոնեություն անցման փուլը: Այս առումով հիշատակելի է Հ. Հակոբյանի կողմից Ս. Գրիգորի տեսիլքի մեկնաբանությունը հին արևելյան տաճարաշինության լույսի ներքո: Իր մի շարք ուսումնասիրություններում Հակոբյանը հիմնավոր տեսակետներ է հայտնում քրիստոնեության ընդունման պատմամշակութային նախադրյալների ու զանազան դրսևորումների վերաբերյալ:

Հնագետը մեծ ներդրում ունի նաև միջնադարյան հնագիտության բնագավառում: Նա, մասնավորապես, ղեկավարել է Շիրակի սարահարթում հայտնաբերված միջնադարյան «խարաբեք» գյուղատեղիի պեղումները (1986-1987 թթ.): Անուրանալի է նրա ներդրումը Բջնիի միջնադարյան ամրոցի պեղումներում, որոնք տասնամյակների ընթացքում ղեկավարում էր պրոֆեսոր Ի. Ղարիբյանը: Ուսանողական տարիներից մասնակցելով միջնադարյան Հայաստանի այդ նշանավոր քաղաքի հետազոտություններին՝ Հ. Հակոբյանը տարիներ շարունակ հանդիսացել է արշավախմբի ղեկավարի տեղակալ: Նրա ջանքերով են պեղվել ամրոցի գաղտնուղու հատվածը, Ստորին բերդի մոնումենտալ շինությունը և մատուռ-տապանատունը գյուղի տարածքում:

Հ. Հակոբյանի հնագետը դաշտային հետազոտություններում նորագույն մեթոդների արմատավորման մեծագույն ջատագովն էր: Նա առաջիններից էր, ով հնագետ Ռ. Պալմերի

հետ համատեղ իրականացրեց Արագածոտնի, Կոտայքի և Շիրակի մի շարք հուշարձանների օդալուսանկարումը:

2001 թվականից Հ. Հակոբյանը դասավանդել է Երևանի պետական համալսարանում՝ հնագիտության և ազգագրության ամբիոնի դոցենտի պաշտոնում: Նրա նախաձեռնությամբ մեծապես բարելավվեցին ամբիոնի ուսումնական ծրագրերը: Նա դասավանդում էր շուրջ մեկ տասնյակ առարկաներ: Ուսանողները կհիշեն նրան որպես փայլուն դասախոս, անբասիր և սկզբունքային մանկավարժ, հոգատար և պահանջկոտ գիտական ղեկավար:

Անժամանակ մահը անկատար թողեց բազմաթիվ մտահաղացումներ, անավարտ՝ տասնյակ նախագծեր: Սակայն Հ. Հակոբյանի հարուստ և բազմաբովանդակ գիտական ժառանգությունն արդեն իսկ զգալի ավանդ է ժամանակակից հայագիտության մեջ:

ԵՊՀ պատմության ֆակուլտետի
հնագիտության և ազգագրության ամբիոն